



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 16 » դեկտեմբերի 2021թ. 198-Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության ՏՀ 01 «Էներգետիկա» հանձնաժողովի ԵՀ 04 «Շինությունների էներգաարդյունավետություն և ջերմաարդյունավետություն» ենթահանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի առցանց քննարկումների N5 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ընդունել և 2022 թ. հունվարի 1-ից գործողության մեջ դնել հետևյալ ազգային ստանդարտները՝
 - ՀՍՏ ԵՆ 1264-3-2021 «Ներկառուցված մակերեսային ջրային ջեռուցման և հովացման համակարգեր. Մաս 3. Չափերի որոշումը»,
 - ՀՍՏ ԵՆ 1264-4-2021 «Ներկառուցված մակերեսային ջրային ջեռուցման և հովացման համակարգեր. Մաս 4. Հավաքակցումը»,
 - ՀՍՏ ԻՍՕ 52017-1-2021 «Շենքերի էներգետիկ բնութագիր. Բացահայտ և թաքնված ջերմային բեռներ և ներքին ջերմաստիճաններ. Մաս 1. Հաշվարկի ընդհանուր մեթոդաբանություն»:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի խորհրդական Հ. Զեյնալյանին:

ՏՆՕՐԵՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ